ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.08.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-09/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2014թ. թիվ 73-1/666788-14 գրությամբ ներկայացված «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00124268) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-09/15 բողոք), «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի 09.10.2014թ. գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի 08.10.2014թ. թիվ 09/2519 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, լսելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.10.2014թ. ժամը 15:30-ին և 13.11.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկումների ժամանակ «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների կարծիքները և ՍՑ-ԳԲԽ-09/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 12.08.2015թ. եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.09.2014թ. թիվ 73-1/666788-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝

խնդրելով ուսումնասիրել «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 03.10.2014թ. թիվ 09/032-1582 գրությամբ դիմել է «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին:

«ՎԱՄՄ» ՍՊԸ-ն 09.10.2014թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը ապրանքների, մասնավորապես՝ անվտանգության աշխատակիցների համազգեստների մատակարարման պայմանագիր է կնքել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի հետ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և պայմանագրի կատարման համար ժամկետ է սահմանվել մինչև 2014թ. օգոստոսի 1-ը: Համազգեստները կարելու համար Ընկերությանն անհրաժեշտ է եղել լրացուցիչ հագուստի վրա տեղադրվող, ասեղնագործված թևքանշաններ և կրծքանշաններ, որոնք պետք է տրամադրեր պատվիրատուն և առանց դրանց հնարավոր չէր համազգեստի պատրաստումը, քանի որ դրանք պետք է տեղադրվերին կարելու ընթացքում: Բացի այդ, ընկերությանը պետք է տրա-մադրվեին նաև անվտանգության աշխատակիցների համազգեստների չափսերը՝ ըստ քանակի:

Ընկերությունը հայտնել է, որ բազմաթիվ պահանջներից հետո Պատվի-րատուն անվտանգության աշխատակիցների համազգեստների համապատասխան չափսերն Ընկերությանը տրամադրել է միայն 07.07.2014թ., իսկ թևքանշանները և կրծքանշանները՝ 01.08.2014թ., ինչի վերաբերյալ առկա են հավաստող փաստա-թղթեր: Ընկերությունը 19.08.2014թ. Պատվիրատուին մատակարարել է պահանջվող ապրանքի մի մասը, որից մի քանի նմուշ Պատվիրատուն վերցրել է հանձնաժո-ղովում

քննարկելու համար, սակայն ապրանքն ընդունելու կամ չնդունելու վերա-բերյալ որևէ փաստաթուղթ ընկերությունը չի ստացել:

Պատվիրատուի կողմից եղել է բանավոր առարկություն գույնի վերաբերյալ, քանի որ համաձայն պայմանագրի՝ արտահագուստները պետք է լինեին կապույտ գույնի, սակայն Պատվիրատուն պահանջել է, որ Ընկերությունը մատակարարի սև գույնի, ինչն ընկերությունը հրաժարվել է կատարել:

Կենտրոնում 20.10.2014թ. ժամը 15:30-ին կազմակերպված քննարկման ժամանակ «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, չընդունելով Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները խախտելու Պատվիրատուի ներկայացուցիչների բերած փաստարկները, հայտնել է, որ Պատվիրատուն պետք է Ընկերությանը տրամադրեր անվտանգության աշխատակիցների համազգեստների չափսերը, թևքանշանները և կրծքանշանները, սակայն համազգեստների չափսերը տրամադրել է 07.07.2014թ., իսկ թևքանշանները և կրծքանշանները՝ 01.08.2014թ., այսինքն՝ պայմանագրով սահմանված ժամկետն ավարտվելու օրը:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ Ընկերությանը չի ծանուցել:

Կենտրոնում 13.11.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերության ներկայացուցիչը մեկ անգամ ևս հավաստել է, որ Ընկերությունը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ստացել:

3. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 03.10.2014թ. թիվ 04/032-1583 գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել է ներկայացնել «ՇՀԱՊՁԲ-11/10-3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն 08.10.2014թ. թիվ 09/2519 գրությամբ Կենտրոն է ուղարկել «ՇՀԱՊՁԲ-11/10-3» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Կենտրոնում 20.10.2014թ. ժամը 15:30-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնել են, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-11/10-3 (ԵՊԲՀ) պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի՝ ապրանքի մատակարարման ժամկետները 5 օրից ավելի խախտելու հիմքով:

Կենտրոնի այն հարցադրմանը՝ արդյոք Ընկերությունը ծանուցվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, թե՝ ոչ, Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնել են, որ այդ մասին Ընկերության էլեկտրոնային հասցեով 05.09.2014թ., իսկ 08.09.2014թ. պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, Պատվիրատուին ուղարկվել են գրություններ: Պատվիրված նամակով, հետադարձ ծանուցմամբ ուղարկված ծրարը 29.09.2014թ. վերադարձվել է Պատվիրատուին՝ նշումով, որ «չի պահանջվել»:

Կենտրոնում 13.11.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Կենտրոնին տրամադրեց Ընկերությանն ուղարկված և 29.09.2014թ. վերադարձված ծրարի պատճենը նշումով, որ նամակը չի պահանջվել:

4. ՍՑ-ԳԲԽ-09/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 12.08.2015թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2014թ. թիվ 73-1/666788-14 գրությամբ «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00124268) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների

գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-09/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2014թ. թիվ 73-1/666788-14 գրությամբ «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալ-սարան» ՊՈԱԿ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրի միջոցով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎԱՄՄ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ընդունված որոշմամբ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՎԱՄՄ» ՍՊԸ-ն:

3. Պատվիրատուի և «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2014թ. կնքվել է հանդեր-ձանքի գնման ՇՀԱՊՁԲ-11/10-3 (ԵՊԲՀ) պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմա-նագիր):

4. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր.

Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Հ/Հ
1	Անվտանգության աշխատակիցների ամառային համազգեստ բաճկոն	Բաճկոն պատրաստված 65 տոկոս բամբակյա և 35 տոկոս սինթեթիկ կտորից, երկու կողային գրպաններով և գոտկատեղերով, գույնը՝ մուգ կապույտ, չափերը՝ 46-54 կամ համարժեքը	90 հատ
2	Անվտանգության աշխատակիցների համազգեստի տաբատ	Պատրաստված 65 տոկոս բամբակյա և 35 տոկոս սինթեթիկ կտորից, երկու կողային գրպաններով, գույնը՝ մուգ կապույտ, չափերը՝ 46-54 կամ համարժեքը	180 հատ
3	Անվտանգության աշխատակիցների համազգեստի վերնաշապիկ	Պատրաստված 65 տոկոս բամբակյա և 35 տոկոս սինթեթիկ կտորից, կարճաթև, երկու գրպաններով, գույնը՝ կապտավուն, օձիքը՝ սև, չափերը՝ 46-54 կամ համարժեքը	180 հատ

4	Անվտանգության աշխատակիցների ձմեռային համազգեստ	Բաճկոն պատրաստված 100 տոկոս պոլիէֆիր կտորից, որի խտությունը կազմում է 240 գր/ՄԱ, ներքին շերտը սինտիպոն, որի խտությունը կազմում է 360գր/ՄԱ, ունի որկու կողային և երկու ներքին գրպաններ, օձիքը՝ մորթիով, գույնը՝ մուգ կապույտ, չափսերը՝ 46-54 կամ համարժեքը	90 հատ
5	Անվտանգության աշխատակիցների ձմեռային համազգեստի վերնաշապիկ	Պատրաստված 65 տոկոս բամբակյա և 35 տոկոս սինթեթիկ կտորից, երկարաթև, երկու գրպաններով, գույնը՝ կապտավուն, օձիքը և թևքերի ներքին մասը սև, չափսերը՝ 46-54 կամ համարժեքը	180 հատ

5. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսվել է վերոնշյալ ապրանքները ձեռք բերել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացուցային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 01.08.2014թ.:

6. Ընկերությունը Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված հինգ չափաբաժին ապրանքները 01.08.2014թ. դրությամբ Պատվիրատուին չի մատակարարել:

7. Պատվիրատուն Ընկերության էլեկտրոնային հասցեով 29.08.2014թ. ուղարկած գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի համաձայն՝ մինչև 01.08.2014թ., Ընկերության կողմից պետք է մատակարարվեր հանդերձանք, որը դեռևս չի մատակարարվել և հնգօրյա ժամկետում ապրանքի չմատակարարման դեպքում անհրաժեշտ տեղեկատվությունը կներկայացվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

8. Պատվիրատուն 05.09.2014թ. Ընկերության էլեկտրոնային հասցեով, իսկ 08.09.2014թ. պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, ուղարկված գրություններով Ընկերությանը տեղեկացրել է, որ Պատվիրատուն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՎԱՄՄ» ՍՊԸ-ի միջև 17.06.2014թ. կնքված հանդերձանքի գնման ՇՀԱՊՁԲ-11/10-3 (ԵՊԲՀ) պայմանագիրը միակողմանի լուծել է՝ պայմանագրի 3.1.7 կետի «բ» ենթակետի հիմքով:

Միաժամանակ Ընկերությանն ուղարկված 08.09.2014թ. թիվ 09/2115 գրությունում Պատվիրատուն նշել է, որ Պայմանագրի 7.2 կետի համաձայն Ընկերության կողմից ենթակա է վճարման տույժ՝ ապրանքի գնի օրեկան 0,05 տոկոսի չափով, ինչն ուշացված 36 օրվա համար կազմում է 60 750 (վաթսուն հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ և տուժանքի մասին համաձայնագրի 1.1.1 կետով սահմանված պայմանագրի

ընդհանուր գումարի 10 տոկոսը կազմող 337 500 (երեք հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարը:

9. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով հաշվարկված տույժը և տուժանքն Ընկերության կողմից չի վերականգնվել:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-09/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսված հանդերձանք, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ ապրանքը մատակարարվում է նույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Այսպիսով, «ՎԱՄՄ» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմա-նագրով ստանձնած պարտավորությունը, քանի որ Պայմանագրով նախատեսված հինգ չաբափաժիններով ապրանքները սահմանված ծավալներով և ժամկետում Պատվիրատուին չի մատակարարել:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից թույլ տրված վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելն Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին գնում-ների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ընկերության պատճառաբանությունն այն մասին, որ Պատվիրատուն ժամանակին չի տրամադրել անվտանգության աշխատակիցների համազգեստների չափսերը, ինչի պատճառով Ընկերությունը հնարավորություն չի ունեցել պայմանագրով նախատեսված ժամկետում կատարել իր պարտավորությունները, անհիմն է, քանի որ համազգեստների չափսերը նախատեսված են եղել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, իսկ Ընկերությանը թևքանշաններ և կրծքանշաններ տրամադրելու վերաբերյալ Պատվիրատուի վրա դրված որևէ պարտավորություն պայմանագրով նախատեսված չի եղել:

Ինչ վերաբերում է Պայմանագիրը լուծելու մասին Ընկերությանը ծանուցած չլինելու վերջինիս ներկայացուցչի հայտնած տեղեկատվությանը, ապա գտնում ենք, որ Պայմանագրով նախատեսված հանդերձանքը հնգօրյա ժամկետում չմատակարարելու դեպքում Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ Ընկերության էլեկտրոնային հասցեով 29.08.2014թ. ուղարկած նախազգուշացնող գրության, Ընկերության էլեկտրոնային հասցեով 05.09.2014թ. ուղարկված Պայմանագիրը լուծելու վերաբերյալ գրության և նույնաբովանդակ գրությունը 08.09.2014թ. պատվիրված նամակով Ընկերությանը ուղարկելը և վերջինիս կողմից այն ստանալուց հրաժարվելու պայմաններում (նամակը փոստային բաժանմունքից 29.09.2014թ. վերադարձվել է նշումով, որ այն Ընկերության կողմից չի պահանջվել) Ընկերությունը Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին չծանուցված համարվել չի կարող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2014թ. թիվ 73-1/666788-14 գրությամբ «ՎԱՄՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած

բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամ՝ **Գոռ Գրիգորյան**